ԾՐԱԳԻՐ «ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ» – Ժ. 02.01

Ժամանակակից հայոց լեզու

1. Հայ գրական լեզվի զարգացման փուլերը:
2. Ժամանակակից գրական հայերենի երկու տարբերակները՝ արևելահայերեն և արևմտահայերեն. դրանց կազմավորման ու զարգացման համառոտ ակնարկ:
3. Ժամանակակից հայերենի տիպաբանական համառոտ բնութագիր:
4. Հնչյուն և հնչույթ:
5. Հայերենի հնչյունական համակարգը:
6. Ձայնավորներ. դրանց բնութագիրը և դասակարգումը:
7. Բաղաձայնական համակարգը. բաղաձայնների դասակարգման սկզբունքները:
8. Ժամանակակից հայերենի երկհնչյունները:
9. Արտասանվածքի տրոհում և վանկ: Վանկի տեսակները:
10. Հնչյունափոխություն. հնչյունափոխական գործոններ և հնչյունափոխության տեսակները:
11. Բառագիտության առարկան: Պատմական /տարժամանակյա/ և համաժամանակյա բառագիտություն: Բաժինները և գիտակարգերը:
12. Բառը որպես լեզվական միավոր:
13. Բառիմաստաբանություն: Բառիմաստ և բառի ձև, բառույթ:
14. Մենիմաստություն և բազմիմաստություն:
15. Իմաստափոխություն:
16. Բառերի տեսակները ըստ ձևաիմաստային փոխհարաբերության:
17. Բառ և ձևույթ: Բառի ձևույթային վերլուծություն:
18. Բառակազմական հիմք. տեսակները:
19. Բառերի տեսակներն ըստ կազմության: Բաղադրիչների հարաբերությունները:
20. Ածանցում: Ածանցների դասակարգումը (ըստ դիրքի, ըստ խոսքի մասեր կերտելու դերի, ըստ գործածականության աստիճանի):
21. Ածանցների հոմանիշությունը, հականիշությունը, համանունությունը:
22. Ժամանակակից հայերենի բառապաշարի ընդհանուր բնութագիրը, պատմական շերտերը: Հիմնական բառապաշար և եզրային բառապաշար:
23. Սահմանափակ գործածության բառեր՝ տերմիններ, բառական հնաբանություն և նորաբանություն, գործառական տարբեր ոճերին հատուկ բառեր:
24. Դարձվածաբանություն. դարձվածը որպես լեզվական միավոր, հիմնական առանձնահատկությունները:
25. Հայ բառարանագրություն: Հայերենի բառարանների հիմնական տեսակները:
26. Ձևաբանությունը որպես քերականության բաժին, ուսումնասիրության առարկան:
27. Քերականական կարգեր:
28. Քերականական ձև և իմաստ:
29. Կցականությունն ու թեքականությունը, համադրականությունն ու վերլուծականությունը ժամանակակից հայերենի քերականական համակարգում:
30. Բառի քերականական ձև. հիմք և վերջավորություն:
31. Խոսքի մասերի համակարգը հայերենում: Խոսքի մասերի դասակարգման սկզբունքը:
32. Գոյականը որպես խոսքի մաս. նրա առանձնահատկությունները, իմաստային-քերականական խմբերը:
33. Գոյականի թվի կարգը. կազմության, իմաստային, կիրառական յուրահատկություններ:
34. Հոլովի կարգը: Հոլովման ձև, իմաստ և պաշտոն:
35. Հոլովները և դրանց կազմությունը:

36. Արտաքին և ներքին հոլովումներ: Զուգաձևությունները հոլովումների համակարգում:
37. Առկայացման քերականական կարգը, ձևավորումը, իմաստային ու կիրառական բնութագիրը:
38. Ածականը որպես խոսքի մաս. առանձնահատկությունները:
39. Թվականը որպես խոսքի մաս. առանձնահատկությունները, տեսակները:
40. Դերանունը որպես խոսքի մաս. առանձնահատկությունները: Դերանվան հարաբերակցությունն այլ խոսքի մասերի հետ. ընդհանրություններն ու տարբերությունները:
41. Դերանունների տեսակները արդի հայերենում:
42. Դերանունների իմաստային, ձևաբանական ու շարահյուսական հատկությունները:
43. Բայը որպես խոսքի մաս:
44. Բայի իմաստային, քերականական և բառակազմական առանձնահատկությունները:
45. Բայի անդեմ և դիմավոր ձևերը. դրանց ընդհանուր ձևաբանական հատկանիշները՝ բայիմաստ և սեռ:
46. Բայի կազմությունը՝ պարզ և ածանցավոր: Ածանցավոր բայերի տեսակները:
47. Բայի հիմքերը (անորոշի, կատարյալի, դերբայական) և դրանց դերը բայի ձևակազմական համակարգում:
48. Բայի սեռի քերականական կարգը: Բայի սեռերը՝ ներգործական, կրավորական, չեզոք:
49. Ձևի և բովանդակության փոխհարաբերությունը սեռի քերականական կարգում:
50. Բայի սեռերը՝ ներգործական, կրավորական, չեզոք:
51. Դերբայների դասակարգումն ըստ գործառույթի՝ բուն (անկախ) և ձևակազմիչ (կախյալ) դերբայներ:
52. Բայի եղանակի քերականական կարգը:
53. Բայի ժամանակի քերականական կարգը:
54. Խոնարհում: Խոնարհման տեսակները (լծորդությունները):
55. Ժխտական խոնարհում:
56. Անկանոն բայեր:
57. Մակբայը որպես խոսքի մաս: Մակբայների իմաստային, քերականական և բառակազմական առանձնահատկությունները:
58. Կապը որպես խոսքի մաս: Բուն կապեր և կապական բառեր: Կապերի տեսակներն ըստ դիրքի, ըստ իմաստի:
59. Շաղկապը որպես խոսքի մաս. տեսակները (համադասական, ստորադասական):
60. Համադասական շաղկապների տեսակները, կիրառությունները:
61. Ստորադասական շաղկապների տեսակները, կիրառությունները:
62. Վերաբերականը որպես խոսքի մաս: Կազմությունը, տեսակները, կիրառությունները:
63. Ձայնարկությունը որպես խոսքի մաս: Տեսակները և կազմության յուրահատկությունները:
64. Շարահյուսության ուսումնասիրության առարկան (բառակապակցություն, նախադասություն, նախադասությունների կապակցություն):
65. Շարահյուսական կապակցություն. բաղադրիչների կապակցման եղանակները (համաձայնություն, խնդրառություն, առդրություն) և միջոցները (վերջավորություն, հերթագայություն, շաղկապ, շարադասություն, հնչերանգ և այլն):
66. Բառակապակցությունը որպես շարահյուսական միավոր: Տեսակները:
67. Նախադասությունը որպես շարահյուսական միավոր
68. Նախադասության հաղորդակցային արժեքը: Նախադասության հատկանիշները:
69. Նախադասության տեսակներն ըստ երանգի:
70. Նախադասությունների կառուցվածքային տեսակները:

71. Նախադասության անդամի ըմբռնումը հայ քերականագիտության մեջ:
72. Նախադասության անդամի և խոսքի մասի հարաբերակցության հարցը: Նախադասության անդամի արտահայտությունը բառով և բառակապակցությամբ:
73. Նախադասության գլխավոր անդամներ: Ենթական և նրա արտահայտությունը:
74. Ստորոգյալ. քերականական ձևավորումը: Պարզ և բաղադրյալ ստորոգյալներ:
75. Նախադասության երկրորդական անդամների դասակարգումը:
76. Գոյական անդամի լրացումներ:
77. Բայական անդամի լրացումներ: Խնդիրներ:
78. Բայական անդամի լրացումներ: Պարագաներ:
79. Նախադասության բազմակի (համադաս) անդամներ. դրանց կապակցման եղանակներն ու միջոցները:
80. Շարադասություն: Բնութագիրը:
81. Միակազմ նախադասություն: Բնութագիրը, տեսակները (դիմավոր և անդեմ միակազմ նախադասություններ):
82. Բառ-նախադասություն. յուրահատկությունները, կիրառությունները:
83. Բարդ նախադասություն: Բնութագիրը:
84. Բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունների կապակցման բառական և շարահարական եղանակներն ու միջոցները:
85. Նախադասությունների կապակցման բառական միջոցներ՝ հարաբերականներ, հարաբերյալներ:
86. Նախադասությունների կապակցման շարահարական միջոցներ (հնչերանգ, շարադասություն, եղանակաժամանակային ձևերի համապատասխանություն և այլն):
87. Համադասությունն ու ստորադասությունը բարդ նախադասության կառուցվածքում:
88. Բարդ համադասական նախադասություն: Բնութագիրը, տեսակները, կապակցման միջոցները:
89. Բարդ ստորադասական նախադասություն: Բնութագիրը, տեսակները: Բաղադրիչների կապակցման միջոցները:
90. Գլխավոր (գերադաս) և երկրորդական (ստորադաս) նախադասություններ:
91. Բարդ ստորադասական նախադասության բաղադրիչների հարաբերակցությունը պարզ նախադասության անդամներին և յուրահատկությունները:
92. Գլխավոր անդամներին հարաբերակից ստորադաս նախադասություններ:
93. Երկրորդական անդամներին հարաբերակից՝ գոյականական անդամի լրացում, բայական անդամի լրացում նախադասություններ և հետևանքի, ամբողջ գլխավոր նախադասությանը լրացնող երկրորդական նախադասություններ:
94. Շարահարական բարդ նախադասություն: Համադասության և ստորադասության դրսևորման յուրահատկությունները և հնչերանգի դերն այդ հարցում:
95. Բազմաբաղադրիչ բարդ նախադասություն: Բազմաբաղադրիչ բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասություններ:
96. Փոխակերպում: Բարդ ստորադասական նախադասության փոխակերպումը պարզի: Չփոխակերպվող երկրորդական նախադասություններ:
97. Մեջբերվող խոսք: Տեսակները:
98. Ուղղակի խոսքի փոխակերպումը անուղղակիի:
99. Պարբերույթ: Պարբերույթի կառուցվածքային յուրահատկությունները, տեղը շարահյուսական կառուցվածքում, ոճական արժեքը:
100. Շարահյուսության ուսումնասիրության առարկան: Նախադասությունների քերականական հարաբերությունները:
101. Նախադասությունների կապակցման միջոցները. բառական և քերականական:

Գրականության ցանկ

- Ժամանակակից հայոց լեզու, ՀՀ ԳԱԱ հրատ., հհ. 1, 2. 3:
- Ասատրյան Մ.Ե., Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն, Ե.,1983:
- Ասատրյան Մ.Ե., Ժամանակակից հայոց լեզու. շարահյուսություն, Ե., 1987:
- Սուքիասյան Ա.Մ., Ժամանակակից հայոց լեզու (հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն, 1982, 1987, 1999), Ե., ԵՊՀ հրատ.: